Հովհաննես Հովհաննիսյան

Արտավազդ

Զարկեցե՛ք դարբիննե՛ր կռանը սալին,
Զարկեցե՛ք կռանը – շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան,
Զարկեցե՛ք դարբիննե՛ր կռանը սալին:

Ահարկու ամպերը եկան ժողվեցան,
Ծեր Մասյաց ճակատին սև քող փաթթեցին,
Գոռում է փոթորիկ գազանի նման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին:

Զարկեցե՛ք կըռանը. խորունկ քարայրից
Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ...
Ցոլացավ փայլակը—արքայի աչքից
Դեպի վեր թռչում են բարկության կայծեր:

Կամի նա ելանել վրեժխնդիր հոգով
Յուր անվերջ տանջանքի թույնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով, —
Բայց ամուր են նորա ծանրը շղթաներ:

Մըտերիմ գամփռները կրծում են կապանք,
Կըրծում են անդադար կապանքն արքայի . . .
Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ տառապանք,

Եվ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի:

Եվ անզոր չարության քո կուռ հարվածներ
Դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին –
Մենք սպասում ենք դեռևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհի:

Բայց եթե քարացած՝ մենք չենք լսելու
Նոր կյանքի կոչն հուժկու, և վերածնության
Սրբարար ավազան մեզ չէ փրկելու, –
Արտավա՛զդ, փշրվի թող մեր կուռ կըռան.

Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին:
Թող կրծեն գամփռոներդ ոտքիդ շղթաներ,
Արձակվին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի՛ բերելու կոտորա՛ծ, ավե՛ր . . .

Բայց ո՛չ. հավատում ենք մենք դեռ փրկության,
Մեզ մի նոր երկնքից նոր լույս կըբացվի,
Եւ տեսնում ենք ահա արդեն ծիածան
Մենք ազա՛տ լուսավո՛ր մի նոր վիճակի . . .

Զարկեցե՛ք դարբիննե՛ր կըռանը սալին,
Զարյեցե՛ք կըռանը – շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցե՛ք դարբիննե՛ր կըռանը սալին: